

Արձանագրություն N 22/4-3

«ՔԵՆԴԼ- ԷԱՃԱՊՁԲ-22/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

12 ապրիլի 2022թ. Ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Հանձնաժողովի անդամներ
Հանձնաժողովի քարտուղար

Ա. Պետրոսյան,
Մ. Գյուլումյան, Ստ. Թաթիկյան,
Ա. Բաղդամյան

1. ՔԵՆԴԼ- ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ

1.1 ՔԵՆԴԼ - ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի բացման նիստը կայացել է ս.թ. ապրիլի 8-ին: Հայտ էին ներկայացրել 2 մասնակից՝ «Էյջ Գրուպ» ՍՊԸ-ն և «ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի թիվ 22/4-2 որոշմամբ «Էյջ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է (Գնային առաջարկները գերազանցում են Պատվիրատուի նախահաշվային գները):

1.2 «ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել էր Հրավերի պահանջներին անհամապատասխանություն. գնահատող հանձնաժողովը eAuction համակարգի միջոցով նկարագրել է անհամապատասխանությունը և դիմել մասնակցին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն: Մասնակիցը ներկայացրել է շտկված փաստաթուղթը: Ներկայումս մասնակցի հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

Զ / ք-ի	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գինը ԱԱՀ-ով	Մասնակցի անվանումը	Պայմանագրի կատարման համար Մասնակցի առաջարկած գինը, ՀՀ դրամ	
				Գինը առանց ԱԱՀ	Գինը ներառյալ ԱԱՀ
1	Գերհամակարգիչ	1 800 000	«ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ	1 500 000	1 800 000
2	Դյուրակիր համակարգիչ	530 000	«ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ	441 000	529 200

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց. Որոշում թիվ 22/4-3՝

ՔԵՆԴԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ԸՆՏՐՎԱԾ մասնակից ճանաչել «ՋՈՒՋԵՊՊԵ» ՍՊԸ-ին:





4. eAuction համակարգում հանձնաժողովի անդամների կողմից մասնակցի հայտի գնահատման ժամանակ տեղի ունեցավ մեխանիկական սխալ, որի արդյունքում համակարգը մրցույթը հայտարարեց ՉԿԱՅԱՑԱԾ:

Խնդիրը կարգավորելու նպատակով օգնության համար armeps/րբԿՄ համակարգի ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ միջոցով հանձնաժողովի քարտուղարը դիմում է ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

Խնդրում ենք հանձնաժողովին թույլատրել նորից գնահատել մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝		Արմեն Պետրոսյան
Անդամներ՝		Միքայել Գյուլումյան
		Ստեփան Թաթիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Արծրուն Բաղդամյան